ՀԱՅՐԱՊԵՏ ԿՐՕՆԱՒՈՐ.— Մբ. Ս. Յակոբի վանքին կը նը-ւիրէ մէկ թղթեայ սբ. Աւետարան արծաթապատ եւ ականա-զարդ (ՄՁ. Թ. 532)։

ՀԱՅՐԱՊԵՏ ՎՐԴ.— Մբ. Ս. Էջմիածնի.— 1709ին ուխտա-ւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, որուն պարտուց վճարման կը մասնակցի Իե. ոսկիով՝ հաշուետուսարի մը հա-մաձայն։

ՀԱՅՐԱՊԵՏ ՎՐԴ. ՄՈԿԱՅԻ.— Գրիգոր պտրք. Պարոնտէրի ժամանակ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։

ՀԱՊԷՇ ԲԱՀԱՆԱՅՔ.— Հապէշխթանէն երկու քահանաներ ուխտաւորութեամբ Երուսաղէմ կուգան. եւ իրենց ուխտը կատարելով՝ կ'երթան Հայոց աշխարհը, և կ'այցելեն վան-քերը։ Ասոնք յետոյ Խիզան քաղաքը կուգան և այլազգիներէն կը նահատակուին. քրիստոնեաները սոյն երկու նահատակ քա-հանաներուն մարմինները ՊՀ (= 1421) թուին կը տանին կ'ամ-փոփեն Բարեձորի վանքին մէջ (գիւղ մը Աղձնեաց, այժմու Խիզան վիճակին մէջ) (Հ. Ն. Վկաները, Հատ. Ա. էջ 155)։

ՀԵԹՈՒՄ Ա. ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ.— Յայնկոյս Յորդանանու Բէրէկի Ս. Յակոբ եկեղեցին շինած է իր Զապէլ թագուհիին յիշատակին։ 1878ին տեղւոյն արաբացիներէն գտնուած արձա-նագրութեան ընդօրինակութիւնը կը դնենք հոս. «Այս եկեղե-ցին Սուրբ Յակովբ անունով Հեթմոյ թագաւորի ժամանակ շին-ուեցաւ երանուհի Տիկնոջ Զապելին Յեսպոնիսնի պատերազմէն վերջ յաղթանակ ելնալով. ԶՁ.» (= 1257). սոյն արձանագրու-թեան տակ քանդակուած են նիզակներ, դրօշներ և անոնց մէջ խոյր մը. (տես. Հատ. Ա. էջ 187-188). Տեսնել մանրամասնու-թիւնները Հեթումի յաղթութիւններուն եւ Բէրէքի հայ գաղ-թականութեան, Ս. Յակոբի եւ Ս. Գէորգ եկեղեցիներու շինու-թեան եւ նոյն նորագիւտ արձանագրութեան մասին. (Անդ. էջ 188-189, նաև Cl. Ganneau, Mission en Palestine et en Phénicie, Ve Rapport, էջ 113, և F. Macler, Les Arméniens en Syrie et en Palestine, էջ 5-6)։ Կասկած չիկայ՝ թէ կեղծ է այս արձանագրու-թիւնը որ կը պահուի Ս. Յակոբի Ծառ. վարժ.ին մէջ։ — Ըստ աւանդութեան, Հեթում թագաւոր, Ս. Ծննդեան եկեղեցիին փայտակերտ առաստաղը իր ծախքովը շինել տուած է, նոյն